ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**«ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

STATE NONPROFIT ORGANIZATION
**"TRAINING CENTER"**

MINISTRY OF FINANCE
REPUBLIC OF ARMENIA

0037 Երևան, Կ.Ուլնեցու 31
Հեռ. 245162, 246885

0037, K.Ulnetzi str. 31, Yerevan, Armenia
Tel. 245162, 246885

<< 20 >> հունվար 2015թ.
№ Ե150/03

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ՈՒԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Ուսուցման կենտրոն>> ՊՈԱԿ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՈՒԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան Կ.Ուլնեցու 31 հասցեով, մինչև 2015թ փետրվարի 02-ը, ժամը 15:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարինե Գալստյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Ուսուցման կենտրոն>> ՊՈԱԿ շենքում, ք.Երևան Կ.Ուլնեցու 31 հասցեով, Կոնֆերենս սենյակում, 2015թ փետրվարի 02-ը, ժամը 15:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում <<Ուսուցման կենտրոն>> ՊՈԱԿ կարիքներրի համար Սննդամթերքի ձեռքբերումը:

<<Ուսուցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ Սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1,2,3 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝
ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն,
բ. գնային առաջարկ (Հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ <<ՈՒԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1>> ծածկագրով ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Կից ներկայացնում ենք կքնվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Ուսուցման կենտրոն>> ՊՈԱԿ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ kg@training-center.am:

Հարգանքով՝
Տնօրեն Ա. Զաքարյան